



16.10.2013

Երեկ՝ հոկտեմբերի 16-ին, ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակի տոնակատարությունների առիթով Երևանում գտնվող Պետական էրմիտաժի տնօրեն Միխայիլ Պիոտրովսկին <<Էրեբունի>> պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանի ուղեկցությամբ այցելել է <<Կարմիր բլուր>> հնավայր:

Այցի ընթացքում Մ. Պիոտրովսկին ծանոթացել է հնավայրում իրականացվող հնագիտական պեղումներին և քննարկվել առաջիկա համագործակցության խնդիրներ՝ հայ, ֆրանսիացի և ռուս հնագետների համատեղ պեղումներ իրականացնելու և Բորիս Պիոտրովսկու՝ <<Կարմիր բլուր>>-ում կատարած աշխատանքների արխիվի թվայնացման ու ամբողջացման վերաբերյալ: